ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 28 >> << սեպտեմբերի >> 2017թ. N 111
ք. Եղեգնաձոր

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2017 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Մարտիրոսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացնել 2015-2016 թ.թ.-ի բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Նորայր Կարապետյանի՝ աշխատանքային խմբի ղեկավար, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Խիկար Խաչատրյանի /հոկտեմբերի 2-ից/ և Համլիկ Ավետիսյանի կողմից:
2. Խմբի աշխատանքներին մասնակից դարձնել վերոհիշյալ ՊՈԱԿ-ի տնօրենին և հաշվապահին:
3. Աուդիտի անցկացման ժամկետը սահմանել 5 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2017 թվականի սեպտեմբերի 29-ին, ավարտել 2017 թվականի հոկտեմբերի 5-ին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ